

նորա ի ձեռն սորա նորոգեալ շինեցաւ, եթէ եկեղեցին և թէ պարխապն, և եթէ ի միջի լեալ շինութիւնսն, և դանօթն և դարգն եկեղեցւոյն բնաւն իւրաստաց արար, քայց ոչ որպէս դառաջին կամ կրկնապատիկ, այլ սակաւ ինչ նշոյլ գրոց երևի մնացեալ ի նախնեաց. իսկ դայլ անթմելի անօթս՝ սա ստացաւ յիշատակ յիւրում անձին. քանզի եթէ խորհել կամիս և իմանալ, ի ներ շինութեանց անօթն և փա (շարունակութիւնը պակասում է):

շարունակելի

Մ. Վ. Մախարյան



Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ե Ջ Ե Ր Ք Ն Ի Բ Բ Բ Ե Ի Ը Պ Ը Ս Տ Ը Ն
Յ Ո Ղ Հ Ա Ն Ն Է Ս Թ Ո Ւ Մ Ա Ն Ե Ա Ն

(Շարունակութիւն)

Շարունակենք Յովհ. Թումանեանի վեցեակի միւս տողերի մեկնութիւնը, վերլուծումը.

Այս ցած կեանքից հետո ու անքեւ
Թռչել երկինք—վերե՛ւ, վերե՛ւ,
Յաւեր, հոգւեր ողջ մտանալ . . .

Այստեղ արտայայտուած ապրումները նիւթ են ծառայել մեր մի «գեղարուեստական քննադատի» համար քարեր շարակու մեր բանաստեղծի վրայ նա (1, էօն) հետևում է «գեղարուեստը կեանքի համար» սկզբունքին և այնպէս է հասկացել, թէ Յովհ. Թումանեանը «բաներ, բաներ, բաներ» շարելով կամենում է մարդկանց կտրել կեանքից և գաղթեցնել դէպի Պառնաս, որն ըստ այդ քննադատի շատ վատ բնակավայր է, որովհետև այնտեղ պաշտուում է «գեղարուեստը գեղարուեստի համար» անիծեալ սկզբունքը . . .

Բայց դա թիւրիմացութիւն է ճիշտ այնպէս, ինչպէս այդ մարդու բոլոր կարծիքները, որ քարոզել է գեղարուեստի մասին և մտրեցրել բանից անտեղեակներին:

Եթէ նա դտարիւն հրապարակախօս չլինէր, իրազեկ լինէր գեղարուեստի թէօրիային, ծանօթանար հիմնովին տաղանդի և գեղեցկի հոգեբանութեան հետ և առհասարակ հոգեբանական դիտութիւնից բացարձակապէս կտրուած չլինէր—հաղիւ թէ նման թիւրիմացութիւններ ծագէին նրա ուղեղի մէջ:

Բայց ինչ որ եղել է, եղել է անվերադարձ կերպով. Ու մենք մտապրութիւն չունինք այդ քննադատի սխալների հերքումով զբաղուել, որովհետև նրան նոր բան հասկացնելը վեր է մեր ոյժերից,

որովհետև օժտուած չենք նրա բանականական արտենայի կասկածելի զէնքերով . . .

Ի՞նչ է իսկական իմաստը Յովն. Թուամանեանի յիշեալ եռաստղի:

Աւելի պարզ արտայայտութիւն, քան տուել է բանաստեղծը իւր ապրումին, դուրէ հնարաւոր էլ չէ: Հէնց այդ պարզութիւնն է, որ թուում է՝ թէօրիական երկար ու ձիգ բացատրութիւնները խտացնելով մի կարծ, շատ կարծ արտայայտութեան մէջ:

Աստղին հայեաղքից տարօրինակ է թւում, թէ ինչու պէտք է բանաստեղծը «ցած», ստոր անուանի կեանքը: Միթէ այդանդ մեշտանական միջավայրի մասին է խօսքը, իսկ յայտնի է, որ այդ միջավայրը ատելով ատում է Յովն. Թուամանեանը: Մենք կհամարձայնէինք դրա հետ մի պայմանով, եթէ այդ խօսքերն արտասանէր «պօէտը» և ոչ Մուսան, գեղարուեստական գեղեցկի մարմնացումը: Արդէն գիտենք, որ «պօէտը» դատում է իրրե աօրէական նութեան մէջ խրուած անձնաւորութիւն, այն ինչ մուսան հետու է այդ աօրէականութիւնից, որպէս գեղարուեստօրէն գեղեցիկը:

Բացատրութիւնը պէտք է այլ տեղ որոնել:

Գեղարուեստական, աւելի ձիշտ՝ բանաստեղծական ստեղծագործութիւնը պահանջում է գեղեցիկը ստեղծելու համար կարուել կեանքից, ֆիզիքայէս անջատուել կեանքի աօրեայ անց ու դարձից: Հակառակ դէմքում գեղեցիկն անհնարին է կերտել. վայրկեանական ապրումները, անհատական, սոսկական երեւոյթները կդրուեն առաջին պլանի վրայ և դուրս կգայ նոյն աօրէականութիւնը անյաջող գեղեցիկ աօրեայ շղարշով փակուած: Բանաստեղծի հոգու մէջ էակներ երկրորդականից, պէտքականը անպէտքից՝ բաժանելու հոգու մէջ պարզութիւն, յստակութիւն մտցնելու նպատակով հարկաւոր է այդ անջատումը կեանքից, վերջնիցս հեռանալով նրան աւելի լաւ դիտելու համար և խորապէս ու լայնօրէն ընդգրկելով տուեալ ապրումների վերջիշումն:

Կեանքը բարձրից դիտելն այդ իմաստն ունի: Դա կեանքի արհամարհումն չէ, ինչպէս երևում է: Դա ընդհակառակը կեանքի աղբիւրին աւելի մօտ լինել է նշանակում, որովհետև մի առարկայ լաւ դիտելու համար մենք կարիք չենք դդում այդ առարկան աչքներս խօթել, այլ հեռացնում ենք մեզանից աւելի յաջող դնելու նպատակով: Արքան ևս այդ օրէնքը կարեւոր է գեղապէտի համար՝ որ պիտի ընդգրկի մի ամբողջ խմբակցութեան կեանքը նրա խորքերում, հիմքերի մէջ: Այդանդից է բղխում Յովն. Թուամանեանի «Թռչել երկինք, վերև, վերև» արտայայտութիւնը:

Բայց այդ թռիչքը պէտք է կատարուի «հեշտ ու անթե»:

Ստեղծագործութեան ժամին, երբ բանաստեղծը «փակում է իւր սենեակում», տողորուած ոգևորութեամբ, նրա գրչի տակից

աղբիւրի պէս հոսում են մաքեր ու պատկերներ դիւրաւ ու հեշտադինս Այդ ոգևորութիւնը ոչ այլ ինչ է, քայց եթէ կենսական եռանդի բարձրացում, որի միջոցին միայն հնարաւոր է ստեղծագործութիւնը կենսազգացութեան իւրաքանչիւր թուլացում հարուած է ստեղծման գործողութեան համար իսկ կենսազգացութեան ամեն բարձրացում մեր «Նսի» սահմաններից դուրս այլ «եսերի» հոգեկան և նիւթական կեանքի ընդգրկումով է պայմանաւորուած: Ոգևորութեան աղբիւրն հէնց այդ հանդամանքի մէջ պիտի որոնել: Երբ մեր հոգին լցում է «ներքուստ», նա որոնում է «արտաքուստ» արտայայտուելու անբնադատելի պահանջ, կարիք: Նա սկսում է երազել, թռչել, վերանալ, անհնարինք հնարաւոր դարձնել, իզէալի և երկայնութեան հետաւորութիւնը ժխտել մի խիզախ ոտնուձով անհրաժեշտից դէպի ազատութիւնը: Լցում հոգին դուրս է գնում իւր պարունակութիւնը հեշտութեամբ, ինչպէս լիցուն անօթից հեղուկն է թափում: Անշուշտ անհատական շահերի սահմաններից դուրս գալու այդ կացութեամբ է պայմանաւորուած տաղանդը, որի հոգեկան կեանքի պայմանները հիմնուած են մահկանացուների հոգեկան կեանքի զարգացման օրէնքի վրայ. «Մարդս,—ասում է հոգեբան Հեօֆդինգը,— ունի անհամեմատ աւելի ոյժեր և զգացմունքներ, քան հարկաւոր է նրա սեպհական զուտ անհատական շահերի համար: Կենսափոխիչ և խանգաւառութեան առատութեամբ մարդ ընդգրկում է ուրիշ մարդկանց կեանքը և վերջապէս, համայնակեցութիւնը»:

Դերասանի լաւ խաղի հոգեբանութիւնը կարող է լոյս ափռել առաջադիր խնդրի վրայ: Ե՞րբ է նա լաւ խաղում: Անկասկած, ոչ այն դէպքում, երբ նա կտրւում է ամբողջ աշխարհից և խորասուզում ինքն իր մէջ: Այլ ընդհակառակը, երբ վերապրում է ներկայացնելի անձի հոգեկան վիճակները, մտնում նրա հոգու մէջ՝ իւր հոգին ընդլայնելով՝ ուրիշ բովանդակութիւն, այլ «ես» ներս մտցնելով իւր ներքին աշխարհը: Դերասանը՝ միշտ սայթաքում է այն ժամանակ, երբ նրան չի յաջողում այդ վերապրումը, ուրիշ հոգեկան կեանքի այդ յիշողութիւնը, երբ չի գործում նրա սիմպատիկ երեակայութիւնը, երբ նրա հոգին իւր մէջ չի կարողանում նոր բովանդակութիւն, նոր «ես» ներս մտցնել, մի խօսքով՝ երբ նա չի վարակւում ստեղծագործական ոգևորութեամբ, որի ներկայութիւնը միայն դարձնում է խաղը հեշտ, դիւրասահ և գեղեցիկ:

Հոգեբանօրէն նոյնն է կատարւում և բանաստեղծի հոգում. «Ստեղծագործութեան ժամին,—ասում է Հայնէն,—բանաստեղծին թւում է, որպէս թէ ինքն ապրել է այլ կեանքով ամենատարբեր վիճակներում, ըստ Պիւթագորեանների ուսմունքին հոգիների վե-

բապրումի մասին, — նրա ինտուիցիան (ներքնատեսութիւնը) մի տեսակ յիշողութիւն է»:

Ոգևորութեան քնախօսութիւնն եւ կարող է հաստատել մեր պնդումը: Ի՞նչով, օրինակ, բացատրել այն հաճոյքն ու թովչանքը, որ մեզ պատճառում է պարօղի դրաւիչ շարժումները: Սպենսէրն ասում է, որ «մենք անգիտակցաբար վերապրում ենք այն հաճելի հեշտութիւնը, որով հմուտ պարօղը կատարում է իւր դրացիօզ մարմնամարզը»: Պարի առաջ բերած յոյզերը լիրիքական բնոյթ ունին ըստ պրօֆ. Աւսիանիկօ-Կուլիկովսկու:

Դարձեալ վարակում, վերապրում, սեպհական հոգու մէջ մի այլ բովանդակութեան մուծում, որին հետևում է ոգևորութիւն, ներքին ապցում, ուսկից «հեշտ ու անթե» սլայք: Այդ բոլորը հնարաւոր է, իրագործելի միայն եւ եթ այն ժամանակ, երբ հոգին մենակ չի զգում իրեն եւ փարում է մի ուրիշին:

Թռչում են երգերս նրան ընդ առաջ,
Յնորքներս աշխոյժ պարում են իմ շուրջ,
Թռչում եմ եւ ես իմ բախտից հարբած
Ու կեանքը թեթե թւում է անուրջ:

Յովհ. Թումանեանին է պատկանում այս քառեակը, որ ցոյց է տալիս պարզօրէն, թէ երբ է լինում այն հրաշալի ստեղծագործական սլայքը — հեշտ եւ անթե փարումն մի այլ «եսի», կենդանի զգացմունքով տոգորուած վերաբերմունք ցուցնելով նրան:

Ի այց այդ գէպքում թւում է թէ բանաստեղծը կեանքի ցաւերն ու հոգսերը պիտի խորապէս զգայ, աւելի կսկծեցուցիչ կերպով ապրի: Այն ինչ ինքը ցանկանում է ստեղծագործութեան պահուն ճղաւեր, հոգսեր ողջ մտածանալ», ինչպէս որ արտայայտում է յիշեալ վեցեակի մէջ, որ մեր վերլուծման նիւթն է կազմում:

Յաւեր, հոգսեր ողջ մտածանալ: Ի՞նչպէս պէտք է հասկանալ այս դարձուածքը, որ շափով իրական է նրա մէջ արտայայտուած իմաստը: Ստեղծագործութեան հոգեբանութեան տեսակէտից իրականութեան չի հակասում այդ մտացումը, որի շնորհիւ միայն հնարաւոր է նոյն ինքը ստեղծագործութիւնը:

Կօնկրէա ցաւերն ու հոգսերը խանդարիչ կարող են լինել բանաստեղծի հոգու սլայծառացմանը: Արուեստի թէօրիայի մէջ հաստատուած կարելի է համարել հետեւեալ ճշմարտութիւնը (զըլ-խաւորապէս Աւսիանիկօ-Կուլիկովսկու շնորհիւ): Երբ որ եւ է զգացմունք բանած է լինում կամ լցրած մարդկային հոգին, այն ժամանակ մտքի եւ երեակայութեան համար համեմատաբար քիչ տեղ է մնում: Որպէս զի մտքի եւ երեակայութեան ստեղծագործական աշխատանքի համար տեղ բացուի, հարկաւոր է, որ ապրուող զգացումների եւ հոգեկան շարժումների այժմէականութիւնը դառ-

նայ անցեալի բաժին: Այդ օրինակ պարագայում անցեալին է մնում և այն բոլորը, ինչ որ նեղ է, մանր, խիստ անձնական: Դա նպաստաւոր է միանգամայն ստեղծագործական աշխատանքի համար: Միտքը դանում է այդ ժամանակ ներքուստ ազատ, և ստանում է մի ուղղութիւն, որ հոգեբանօրէն անձնական չէ, այլ հանրական: Յաւր, հոգսը հանդէս են գալիս կսկծեցնելու համար միայն և եթ անհատական սահմանում, համայնական ընդհանրացման ենթարկուելով՝ նրանք կորցնում են իրենց կսկծեցուցիչ յատկութիւնը, պատճառելով մոռացման հաճելի ապրումը:

Վեցեակի վերջին երկու տողը առաջին հայեացքից հակասում են «դաւեր, հոգսեր ողջ մտանալ» արտայայտութեանը: Սրան անմիջապէս հետևում է,

Դժոխս իջնել, դրախտ գնալ,
Անհուն զգալ, բովիչ երգել

Ի՞նչպէս հաշտեցնել այդ երկու դրութիւնը: Եթէ բանաստեղծը ջաւեր ու հոգսեր մոռանում է, այլ ևս ինչպէս նա կարող է դժոխք իջնել, այսինքն ապրել տանջանքների կատարելատիպը:

Մի փոքրիկ բացատրութիւն բաւական է համոզուելու համար, որ ոչ մի հակասութիւն գոյութիւն չունի այստեղ:

Բանաստեղծութեան բնական լինելու ամենակարևոր պայմանը անկեղծութիւնն է:

Բանաստեղծն այստեղ անկեղծօրէն հրապարակ է հանում ստեղծագործութեան գաղանիքներից մէկը:

Դա իրականութեան մոռացումն է նրան աւելի խոր և լայնօրէն ապրելու համար: Կօնկրէտ ապրումներն իրենց վայրկենութեամբ տեղի են տալիս այդ ապրումների անհունութեամբ և յաւերժութեամբ թափանցուած յիշողութեան առաջ: Անհատականը տեղի է տալիս համայնականին, առօրէականը—դեղեցկին, մահկանացուն յատուկը—տաղանդին:

«Դժոխք իջնել, դրախտ գնալ» արտայայտութիւն է բանաստեղծի ամեն ինչ «անհուն զգալուն», նրա զգացածը և առօրէականը բեկոններ են կաղմում, որովհետև նա, ինչպէս ասել ենք, մի որոշ խմբակցութեան կատարելատիպն է, որի մէջ ներփակուած է կօլլեկտիւ էներգիայի կուտակումը:

Երկու հատուած Աւ. Իսահակեանից և Ստ. Եարջանեանից աւելի լաւ կպարզեն մեր ասելիքը,

Տիեզերքի պերճ հիւսուածքն եմ,
Իմ մէջ երկինքն է երգում.
Բանկում է սիրոյ հրդեհն,
Վշտի հեղեղն աղմկում . . .

Եթէ սիրուս վառ հրդեհից
 Մի նսեմ կայծ, սեռչեանց,
 Լուս սրտումըդ միայն շողայ,—
 Քուսն յոյզերով կայրուիս

Եթէ վշտիս ջերմ հեղեղից
 Մի ջինջ կաթիլ, սիրելեա,
 Չքնաղ կրծքիդ միայն ծորէ,—
 Բիւր վշտերով կը լցուիս . . .

Այս գեղեցիկ ստանաւորի մէջ ցայտուն կերպով է արտայայտուած այն, թէ ի՞նչ է նշանակում իրապէս «դժոխք իջնել դրախտ դնալ» բանասանդի համար:

Քնարերգուն ասօրէականութիւնից բարձրանալով և իրերն ու երևոյթները գիտելով անհունութեան և յաւերժութեան լոյսերի մէջ, ինքը լինելով մի խմբակցական կեանքի արտադրած կատարելաւոր, պարզ է, որ նրա սեպհական ապրումները պէտք է լինեն «զուխ դործոյներ», եթէ նրանք անկեղծ են, անպաճոյճ և նոր-յատկութիւններ, որոնցով պայմանաւորուած է գեղարուեստական երկի յաջողութիւնը ըստ Լ. Տօլստոյի:

Ասում Եարջանեանի մօտ ևս «զուխ դործոյ» ապրումներն արտայայտուած են շեշտակի.

Հողիս մէջ երբեմն արշալոյսներ կարիւնեն

Սւ պաղատող աղաղակներու անասելի համանուագ մը կորոտայ . . .

Հոն սրածումներու աշխարհ մը կայ ուր սարսափահար կեանքեր,

Չկը շարժումին, ձեր օգնութեան, ձեր ձայնին կը ստասեն . . .

Հողիս մէջ հարսանիք մը կայ և մեակաւորներու թափօր մը մի-անգամայն . . .

Ահա թէ ինչ է նշանակում «անհուն դգալ, թովիչ երգել» . .

Ասում Եարջանեանի գեղեցիկը որ նոյնպէս հայրենի եղերքն է, իւրայատուկ բնոյթ ունի: Բոլոր հնարաւորութիւններով լինելով օժտուած նիւթի կողմից հրապարակ սխօսութեան բնադաւառը, կուսի ապրումներէ սահմանները թեակոխելու համար, այնուամենայնիւ նրա Մուսան, գեղարուեստօրէն գեղեցիկ մարմնացումը մնալով՝ տալիս է գրաւիչ էջեր անկուսի ապրումների, գերադան-ցօրէն գեղարուեստական յոյզերի արտայայտութիւններ:

Մի աւելորդ անգամ ևս այդ գէճքը ցոյց է տալիս. թէ հրապարակաստական և գեղարուեստական ստեղծագործութիւնների միջև գոյութիւն ունի ոչ նիւթի, այլ մեթոդի անջրպետ, որ շպէտք է անտես անել և իրար հետ շխտել հիմնովին տարբեր ապրումները հոգեբանական տեսակէտից:

Այն բոլորն ինչ որ Յովն. Թումանեան արտայայտում է մեզ

գրադեցնող վեցեակի մէջ հրատարակասօսական ստեղծագործութեան տեսակէտից զույգ էր քաներ, բաներ, բաներ» են, սակայն գեղարուեստական քննադատութիւնը պէտք է ցոյց տայ, որ այդ «բաները» ունին խորունկ բովանդակութիւն՝ միայն թէ հարկաւոր է նրանց կարգալ իմանալ, ինչպէս հարկաւոր է . . .

(շարունակելի)

Ա. Տէրտեան



ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԽԱՆԳԱՐՄՈՒՆԻՔ

Պատուական «Արարատ» ամսագրից Յդոստոսի տետրադում կարդացի «Յուշարար» ստորագրութեամբ մի փոքրիկ յօդուած, ուր հեղինակն շատ իրաւացի կերպով խօսում է մեր արդի աշխարհիկ լեզուի մէջ վերջին ժամանակներս կատարուող աղաւաղմանց մասին, որը մի շատ տխուր և կամայականութիւնից ոչ-զերծ երևոյթ է դարձել և հայկական գրագիտութեան վնաս է բերում: Ես «Է» գիրը չեմ գործածում, ասում է մէկը, ես «ո»ն չեմ ընդունում, հեղինակաւոր գիտնականի պէս բացահայտում է միւսը, ես գրում եմ «Պէպօ՛ի», «Գարչօ՛ի» և ոչ Պէպոյի, Գարչոյի» յայտարարում է երրորդը և այլն, և այլն:

Այդպիսով ստացւում է մի խառնաշփոթ դրութիւն և անգրագիտութիւնը դարգանում, քանի որ ստուար մեծամասնութիւնը, և նամանաւանդ աշակերտութիւնը, անտեղեակ լինելով լեզուագիտութեան հմուտ և դարերի ընթացքում կազմուած և կայացած օրէնքներին հետևում է վերոյիշեալ ինքնակոչ հեղինակներին և աղաւաղում գրագիտութիւնը և վնաս լեզուի:

Վեզուի ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մացնելը պէտք է վերապահուած լինի բարձրագոյն գիտնական հաստատութեանց և հեղինակաւոր լեզուագէտ անձանց, և ոչ առաջին պատահած քնարերգ բանաստեղծի կամ հրատարակասօսի: Ես սիրով կընդունեմ երբ ինձ մի գիտնական ասէ, որ պէտք է գրել «ադաղաղ» (այդ-աղաղակել) և ոչ «աքաղաղ»: Բայց եթէ մէկը ինձ խորհուրդ տայ գրել «Սաքօի» և ոչ «Սաքոյի», ես չեմ ընդունիլ, որովհետեւ այս ուղղագրութիւնը գիտնական հիմք չունի և հակառակ է հայոց լեզուի տարրական կանոններին:

Վերջապէս ի՞նչի համար է այս պարզութիւնը, եթէ մինչև անգամ ասենք որ «Սաքօի» աւելի պարզ է քան Սաքոյի: — Աչնչի: